ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝** Գոհար Կարապետյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժնի ավագ մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Ալմաթի 2025 թվականի մարտի 31-ից մինչև ապրիլի 5-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ և Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Կայուն զարգացման նպատակների ֆինանսավորման գործիք/ Sustainable Development Goals–Financing Tool, SDG-FiT» թեմայով աշխատաժողովին:

6. **Քննարկված թեմաները՝**
   1. SDG-FiT մոդելի տեսական հիմքերը՝ իրական, հարկաբյուջետային և արտաքին հատվածների ներկայացմամբ
   2. Առցանց գործիքի գործնական կիրառություն և տվյալների մուտքագրումը
   3. Բազային սցենարի և քաղաքական սցենարների ձևավորում՝ ֆինանսավորման տարբեր ուղիների վերլուծությամբ
   4. SDG նպատակների ֆինանսավորման բացերի գնահատում
   5. Հարկաբյուջետային և կառուցվածքային բարեփոխումների միջոցով քաղաքական սցենարների մշակում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Աշխատաժողովի ընթացքում իրականացվել են խմբային գործնական աշխատանքներ, որոնց նպատակն էր մշակել իրատեսական քաղաքականության սցենար՝ հիմնվելով SDG-FiT գործիքի միջոցով կառուցված բազային սցենարի վրա: Խմբի կողմից պատրաստվել է շնորհանդես՝ ներառելով քաղաքական առաջարկների վերլուծություն, մոդելի արդյունքների համեմատություն և առաջարկվող սցենարի իրատեսականությունը՝ Ղրղզստանի Հանրապետության օրինակով: Խումբը քննարկել է երկրի տնտեսական, քաղաքական և ինստիտուցիոնալ իրողությունները: Խմբային աշխատանքների արդյունքում մշակված սցենարը մուտքագրվել է SDG-FiT գործիքի մեջ՝ օգտագործելով նախապես ձևավորված բազային սցենարի եզակի բանալին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կարող են արդյունավետորեն կիրառվել Կայուն զարգացման նպատակների (SDG-ների) ֆինանսավորման և գնահատման ուղղությամբ Հայաստանի քաղաքականության պլանավորման և վերլուծության գործընթացներում: Գործիքի կիրառությունը հնարավորություն կտա՝

- Գնահատել Կայուն զարգացման նպատակների իրականացման ֆինանսավորման բացերը և ստեղծել համապատասխան քաղաքական սցենարների մշակման հնարավորություն
- Իրականացնել տնտեսական աճի, պետական ֆինանսների և արտաքին ֆինանսավորման աղբյուրների փոխազդեցության ավելի համապարփակ վերլուծություն:
- Օգտագործել SDG-FiT մոդելի տրամաբանությունը՝ քաղաքականության այլընտրանքային սցենարների մշակման և տարբերակների գնահատման նպատակով:

10. Գործուղվող՝

Միջազգային համագործակցության
վարչության օտարերկրյա
պետությունների և միջազգային
կազմակերպությունների
հետ համագործակցության համակարգման
բաժնի ավագ մասնագետ

Գոհար Կարապետյան

08.04.2025թ.